ԶԼՄ-ՆԵՐԸ
ԵՎ
ՀԱՇՄԱՆԴԱՄՈՒԹՅՈՒՆԸ

Ուղեցույց
ԶԼՄ-ների և հաշմանդամություն ունեցող անձանց համար

Գյումրի 2014

ԶԼՄ-ՆԵՐԸ ԵՎ ՀԱՇՄԱՆԴԱՄՈՒԹՅՈՒՆԸ

Ուղեցույց

ԶԼՄ-ների և հաշմանդամություն ունեցող անձանց համար

Գյումրի

2014

Մամուլն պատասխանատվություն ունի նկարագրել հաշմանդամություն ունեցող անձանց այնպես, ինչպես նրանք կան, որպեսզի հաշմանդամության հետ կապված վախը փոխարինվի ըմբռնմամբ և գիտելիքով:

Լրագրող՝ Լինդա Քրաբթրի

Ուղեցույցը հրատարակվել է «Ագաթ» Հատուկ Կարիքներով Կանանց Կենտրոն Հասարակական Կազմակերպության կողմից «ԶԼՄ-ներն ու հաշմանդամությունը» ծրագրի շրջանակներում, որը ֆինանսավորվել է ԱՄՆ դեսպանության հասարակայնության հետ կապերի գրասենյակի դրամաշնորհի շրջանակներում: Ուղեցույցում հեղինակի արտահայտած կարծիքի, եզրակացության կամ առաջարկության համընկնումը ԱՄՆ կառավարության դիրքորոշման հետ պարտադիր չէ:

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Ըստ ՀՀ Աշխատանքի և Սոցիալական Հարցերի Նախարարության 2014 թվականի վիճակագրական տվյալների՝ Հայաստանում ապրում է մոտ 196000 հաշմանդամություն ունեցող անձ: Նրանք հաճախ ենթարկվում են խտրականության՝ հասարակության թյուր մտածելակերպի և կարծրատիպերի պատճառով: ԶԼՄ-ները հսկայական դեր են խաղում հաշմանդամություն ունեցող մարդկանց իրավունքների և հիմնախնդիրների մասին հասարակական գիտակցության ձևավորման գործընթացում: ԶԼՄ-ն կարող ուժ է և ի զորու է կոտրել կարծրատիպերն ու ապատեղեկատվությունը, հզոր դաշնակից է՝ մտածելակերպը փոխելու, խտրականությունը նվազեցնելու ու հանրային իրազեկությունը բարձրացնելու գործընթացում: Ցավոք վախն ու կարծրատիպերը խոր արմատներ ունեն հայկական մշակույթի և իրականության մեջ, ինչն էլ իր հերթին ազդում է մամուլի վրա: Լրագրողները հաշմանդամություն ունեցող մարդկանց հետ շփման ընթացքում շատ հաճախ տեսնում են միայն նրանց հաշմանդամությունը, այլ ոչ թե անձը: ԶԼՄ-ները հաշմանդամություն ունեցող անձին լուսաբանում են կամ որպես զոհի, կամ հերոսի դերում, ներկայացնում են պատմություններ, որոնք կամ կարեկցանք են առաջացնում հեռուստադիտողների մոտ, կամ վեհացնում են հաշմանդամություն ունեցող անձին որպես հերոսի՝ ով հաղթահարել է իր հաշմանդամությունը: Լրատվական դաշտի մասնագետները չունեն համապատասխան գիտելիքներ և կարողություններ, որպեսզի հաղորդումներ պատրաստեն սոցիալական ներառման տեսանկյունից, լիարժեք չեն տիրապետում հաշմանդամություն ունեցող անձից հարցազրույց վերցնելու ճիշտ ձևերին, լեզվին և տերմինաբանությանը՝ լրատվական հաղորդումներում և այլ իրավիճակներում հաշմանդամություն ունեցող անձանց լուսաբանելիս: Մյուս կողմից էլ, հաշմանդամություն ունեցող անձիք պատրաստ չեն երևալ լրատվական դաշտում:

Սույն ուղեցույցը նախատեսված է ԶԼՄ ներկայացուցիչների և հաշմանդամություն ունեցող անձանց համար՝ լրատվական դաշտը բարելավելու և վերջիններիս իրազեկությունը բարձրացնելու համար:

Համագործակցություն ԶԼՄ-ների հետ

ԶԼՄ-ները կարևորագույն գործընկերներ են այն Հասարակական Կազմակերպությունների համար, որոնց նպատակն է ազդեցություն ունենալ որոշումների կայացման գործընթացի վրա: Արդյունավետ համագործակցության դեպքում՝ ԶԼՄ-ները ոչ միայն նպաստում են հաշմանդամություն ունեցող անձանց մասին դրական կերպարի ձևավորմանը, այլ նաև հանդես են գալիս որպես դաշնակից՝ պաշտպանելով նրանց իրավունքները և օգնելով ՀԿ-ներին՝ ազդել որոշումների կայացման գործընթացի վրա: ԶԼՄ-ները հզոր ազդեցություն ունեն որոշումների կայացման գործընթացի վրա տարբեր փուլերում՝ խնդրի բացահայտում, առաջարկությունների մշակում, որոշման կայացում, որոշման գործադրում, մշտադիտարկում, գնահատում և այլն:

ՀԿ-ների և ԶԼՄ-ների համագործակցությանը խոչընդոտող հիմնական մարտահրավերներից մեկը՝ ԶԼՄ-ների հաշմանդամության հետ կապված թեմաները լուսաբանելու հմտությունների պակասն է: Հայկական հեռուստաընկերությունների լրատվական հաղորդումները և հաշմանդամության թեման վեր հանող հայկական ֆիլմերը պատշաճ կերպով չեն ներկայացնում հաշմանդամություն ունեցող անձանց վիճակը: Սա բացասաբար է ազդում հաշմանդամություն ունեցող անձանց վերաբերյալ հանրության ընկալմանը և նոր խոչընդոտներ է ստեղծում հաշմանդամություն ունեցող անձանց ներառման համար:

Լրատվամիջոցներով հաշմանդամություն ունեցող անձանց ներկայացումը ազդում է որոշում կայացնողների վրա այնպես, ինչպես մնացած լսարանի վրա: Եթե որոշում կայացնողներն ունեն արմատավորված կարծրատիպեր հաշմանդամություն ունեցող անձանց վերաբերյալ, նրանք կկայացնեն որոշումներ՝ հիմնված այդ կարծրատիպերի վրա, որոնք հաշվի չեն առնի հաշմանդամություն ունեցող անձանց իրական հնարավորություններն ու կարծիքները: ԶԼՄ-ների և

ՀԿ-ների միջև համագործակցության բացակայության պատճառով՝ հաշմանդամությանը վերաբերող հարցերը թերի են լուսաբանվում:

Երբ ԶԼՄ-ներին համագործակցության առաջարկ եք անում, շատ կարևոր է նշել այն օգուտները, որ ԶԼՄ-ները կունենան ՀԿ-ների հետ համագործակցության արդյունքում. մեծաքանակ տեղեկատվության տրամադրում, նոր գաղափարների աղբյուր, մասնագիտական փորձ՝ հաշմանդամությանը վերաբերող հարցերում, հնարավորություն՝ լսելու խնդրի մասին տարբեր աղբյուրներից, տեղեկատվություն՝ խնդիրների և դրանց հնարավոր լուծման վերաբերյալ և այլն: Հաջորդ կարևոր հանգամանքն այն է, որ ԶԼՄ-ները, համագործակցելով ՀԿ-ների հետ, կարող են իրենց հաղորդումները դարձնել ավելի հետաքրքիր հաշմանդամների համար՝ այդպիսով ընդլայնելով իրենց լսարանը և բարձրացնելով վարկանիշը:

Հարցազրույց վերցնելու Էթիկա
Հարցազրույցի նախապատրաստում

- Անաչառ եղե՛ք և հիշե՛ք, որ այն անձը, ումից դուք հարցազրույց եք վերցնում, եզակի փորձ, կարողություններ և գաղափարներ ունեցող անհատ է:
- Եթե տվյալ անձի հաշմանդամությունը լուսաբանվող նյութի հիմնական թեման չէ, մի՛ կենտրոնացեք դրա վրա:
- Հստակ սահմանե՛ք ձեր վերջնաժամկետը և պատմության ուղղվածությունը հարցազրույցի մասնակցի հետ ձեր նախնական կապի ժամանակ:
- Հաշվի առեք անձի կարիքները՝ հարցազրույցի վայրը ընտրելիս:
- Եթե դուք հարցազրույց եք վերցնում անվասայլակ օգտագործող անձից, պարզեք հարցազրույցի անցկացման վայրի մատչելիությունը, ներառյալ՝ մուտքը, կանգառումը և սանհանգույցը:

- Բավարար ժամանակ հատկացրեք ձեր հարզազրույցի համար՝ հաշվի առնելով այն փաստը, որ ինչ-որ մեկն օգտագործում է հաղորդակցության այնպիսի զանազան միջոցներ, ինչպիսիք են ձայնային սարք, ժեստեր, կամ հաղորդակցության հարթակը պահանջում է ավելի երկար ժամանակ՝ հարցին պատասխանելու համար:
- Եթե դեմ առ դեմ կամ հեռախոսային հարցազրույցն անհնարին է, օգտագործեք գրավոր հաղորդակցություն՝ տեսազանգ կամ փոստ:
- Անմիջականորեն խոսեք հաշմանդամություն ունեցող անձի, և ոչ թե ուղեկցող անձի կամ թարգմանչի հետ: Համոզվեք, որ ցանկացած ուղեկից բարեհամբյուր ընդունելության է արժանացել:
- Տեսողական խնդիրներ ունեցող անձից հարցազրույց վերցնելիս՝ մշտապես ներկայացեք և ներկայացրեք ձեզ ուղեկցողին:
- **Լավագույն խորհուրդը:** Հարցրեք փորձագետին՝ հենց հաշմանդամություն ունեցող անձին, ումից դուք հարցազրույց եք վերցնում, քանի որ վերջինս ավելի լավ գիտի իր կարիքները:

ՀԱՐՑԱԶՐՈՒՅՑ

- Հեշտացրե՛ք հաղորդակցությունը՝ նստելով անձի տեսողական մակարդակին համապատասխան:
- Տեղավորվե՛ք ինքներդ և տեղադրեք տեսախցիկը (եթե առկա է) հարցազրույց տվողի աչքերի մակարդակին համապատասխան:
- Հիշե՛ք հարգել անձի անհատական տարածքը: Եթե անձն օգտագործում է տեղաշարժման միջոց, ինչպիսիք են անվասայլակը կամ քայլակը, մի՛ հենվեք դրանց վրա: Մի՛ հրեք առանց թույլտվության:
- Եթե հարցազրույց եք վերցնում խուլ կամ լսողական խնդիրներ ունեցող անձից, անհրաժեշտ է նրա ուշադրությունը գրավել՝ դիպչելով նրա ուսին, կամ ձեռքը թեթևակի թափահարելով: Հիշե՛ք, պետք է անմիջականորեն ուղիղ նայել անձին և խոսել հստակ ու դանդաղ, քանի որ որոշ անհատներ շուրթերով են կարդում:
- Երբ խոսում եք մի մարդու հետ, ով ունի լսողության խնդիր, համոզվե՛ք, որ դուք դեմ-դիմաց եք կանգնած, և խոսելու ընթացքում մի՛ ծածկեք ձեր բերանը:
- Երբ միջոցառում եք լուսաբանում, որտեղ ժեստերի լեզվի թարգմանիչ է ներկա, պետք է հաշվի առնել թարգմանչի և ծառայությունից օգտվող անձի շփումը: Խուսափե՛ք քայլել նրանց միջև կամ խոչընդոտել շփումը: Հաճախ մարդիկ, ովքեր օգտվում են թարգմանչի ծառայությունից, գտնվում են նշանակված հատվածում՝ սենյակի առջևի մասում:
- Եթե հարցազրույց եք վերցնում խոսքի խնդիրներ ունեցող կամ այլընտրանքային հաղորդակցության միջոցներ օգտագործող անձից, շատ ավելի արդյունավետ է հարցերի կարճ ձևակերպումը:
- Ուշադիր լսե՛ք և մշտապես սպասե՛ք, որպեսզի անձը վերջացնի իր խոսքը, այլ ոչ թե ամբողջացրեք նրա միտքը: Եթե դուք չեք հասկանում խոսակցին, խնդրե՛ք կրկնել միտքը: Մյուսների նման հաշմանդամություն ունեցող անձը

նախընտրում է կրկնել իր միտքը, քան թե սխալ ընկալվել կամ մեջբերվել:

- Մտավոր խնդիրներ ունեցող անձիք հաճախ դժվար են ընկալում վերացական հասկացությունները: Ուստի հարցերը պետք է ձևակերպել ինչքան հնարավոր է պարզ՝ օգտագործելով հստակ ձևակերպումներ: Նախադասությունները պետք է լինեն կարճ, և ամեն նախադասություն պետք է շոշափի միայն մեկ հարց: Ժամանակի և թվերի հետ կապված հարցերը կարող են խնդրահարույց լինել, ուստի այնպիսի հարցերից, ինչպիսիք են «ինչքա՞ն», «որքա՞ն հաճախ» կամ «ե՞րբվանից», պետք է խուսափել: Հետևյալ ինտերնետային կայքերը, www.easyinfo.org.uk և www.bris.ac.uk/Depts/NorahFry/PlainFacts կարող են տրամադրել որոշ լրացուցիչ ուղենիշներ՝ տեղեկությունն ավելի մատչելի և դյուրին դարձնելու համար:
- Օգտագործվող հարցի և տրվող ցանկացած պատասխանի լեզուն պետք է լինի ծանոթ և հասկանալի բոլորին:: Նախընտրելի է խուսափել այո կամ ոչ պատասխանները ենթադրող հարցերից:

Լիազորված անձանցից հարցազրույց վերցնելիս կարևոր է:

- Եթե մտավոր խնդիրներ ունեցող անձանց փոխարեն պատասխաններ է տվել լիազորված անձը, ապա այս փաստը պետք է հստակորեն նշվի յուրաքնչյուր հոդվածում կամ զեկույցում: Գլխավոր հարցվողը հարցազրույցի ընթացքում ներկա լինի, իդեալական դեպքում՝ նստած լիազորի կողքին
- Լիազորված անձը պետք է խոսի հաշմանդամություն ունեցող անձի անունից և ներկայացնի նրա տեսակետը (օրինակ՝ «Արամին դուր է գալիս…», ոչ թե «Ես կածում եմ, որ լավ կլիներ, եթե նա…»

- Հաշմանդամություն ունեցող անձիք սովոր են առօրյա խոսակցական տերմիններին և չեն վիրավորվի, եթե դուք ասեք « ցտեսություն» կամ «եկեք քայլենք», նույնիսկ եթե նրանք տեսողական խնդիրներ ունեն կամ օգտագործում են անվասայլակ:
- Եղե՛ք այնպիսին, ինչպիսին կաք: Թուլացեք և խոսեք ձեր բնական ձայնով: Փորձեք հաճույք ստանալ ձեր հարցազրույցից:
- Եթե դուք օգնություն եք առաջարկում, սպասեք, մինչև առաջարկը ընդունվի:
- Եթե վստահ չեք, թե ինչպես կարելի է սկսել հարցազրույցը, հարցրե՛ք:

ՀԱՂՈՐԴԱԿՑՈՒԹՅՈՒՆ

<u>Մատչելիություն:</u> Համընդհանուր դիզայնը ենթադրում է, որ տեղեկատվությունը կարող է հեշտությամբ ներկայացվել մի շարք միջոցներով (ներառյալ այլընտրանքային ձևաչափերը) այնպես, որ այն հասանելի լինի բոլորին: Տեղեկատվության ձևաչափը պետք է ընտրել հաղորդակցությունների նախագծման փուլում, հաշվի առնելով թիրախային լսարանը, տեղեկատվության տեսակը և կարևորությունը և այլ հարցեր:

<u>Պարզ լեզու:</u> Ճանաչե՛ք ձեր լսարանը և գործածեք նրանց համար հասկանալի լեզու: Գործածեք կարճ և պարզ նախադասություններ և պարբերություններ: Խուսափեք ժարգոնի, հապավումների, տեխնիկական տերմինների և մանրամասների գործածումից: Պարզ հրահանգներ տվեք:

<u>Եղե՛ք հարգալից:</u> Հարգալից խոսելաձև և քաղաքավարություն ցուցաբերեք: Օգտագործեք հասարակ, ճշգրիտ և չեզոք լեզու: Հաճախ անհարիր է անձի հաշմանդամության նշումը: Մի սահմանեք անձին՝ ըստ նրա հաշմանդամության կամ օգտագործվող սարքավորման: Գործածեք չեզոք լեզու, որը թույլ է տալիս քննարկել բարդ հարցերը՝ պահպանելով արժանապատվություն և հարգանք միմյանց հանդեպ:

Գործածեք ներառական լեզու: Խուսափե՛ք բացասական կարծրատիպեր ստեղծելուց կամ դրանք ամրապնդելուց: Օրինակ, «անվասայլակին զամված» արտահայտության փոխարեն գործածեք «տեղաշարժվում է անվասայլակով» արտահայտությունը:

Հաշմանդամություն ունեցող անձանց վերաբերյալ տեղեկատվությունը պետք է նրանց ներկայացնի որպես հասարակության շարքային անդամների, այլ ոչ թե հասարակությունից անջատ, յուրահատուկ անձանց: Պատկերեք նրանց ամենօրյա սոցիալական իրավիճակներում և աշխատանքային միջավայրերում: Մի՛ կենտրոնացեք բժշկական կամ կախյալ հարաբերությունների վրա, ինչպիսին, օրինակ՝ կույր անձին ուղեկցումն է: Մեկուսացման տպավորություն մի՛ ստեղծեք: Բնավ պարտադիր չէ, որ հաշմանդամություն ունեցող անձիք առանձնանան այլ մարդկանցից:

Ներառական հաղորդակցություն: Հայաստանում ավելի քան 196.000 հաշմանդամություն ունեցող անձիք են ապրում: Հաշմանդամություն ունեցող անձը պետք է վստահ լինի, որ իր խոսքը հասանելի է բոլորին, ինչի համար անհրաժեշտ է ապահովել տեղեկատվության ներառականությունն ու մատչելիությունը:

Բնութագրում, ներկայացում: Հաշմանդամություն ունեցող անձանց իրատեսական բնութագրումը վճռորոշ դեր ունի փոփոխությունների առաջացման և իրավիճակի բարելավման հարցում: Հաշմանդամության դրական բնութագրում է համարվում հաշմանդամություն ունեցող մեկ կամ մի քանի անձանց ներկայացումը արդար, նորարարական և խրախուսող եղանակով: Այսպիսի բնութագրումը հիմնված է ոչ թե բժշկական, այլ սոցիալական մոդելի վրա: Դրական պատկերումը խթանում է հանրային կարծիքի փոփոխությունը և բարձրացնում է ակնկալիքները հաշմանդամություն ունեցող անձանց հմտությունների վերաբերյալ:

ԶԼՄ-ն կենտրոնական դեր ունի հաշմանդամություն ունեցող անձանց վերաբերող և նրանց մասնակցությամբ մեդիա արտադրանքի քանակի և որակի բարելավման հարցում: Ներառելով հաշմանդամություն ունեցող անձանց մեդիա/ստեղծագործական արտադրության մեջ, ԶԼՄ-ն կարող է փոխել կարծրատիպը, որ հաշմանդամությունը «ողբերգություն» է, որի «զոհն» է դարձել բնակչության մի փոքր մասը: Փոխարենը՝ նրանք կարող են ցույց տալ, որ հաշմանդամությունը կյանքի բնական մասն է, և որ հաշմանդամություն ունեցող անձիք կարող են հաջողակ լինել ամենատարբեր բնագավառներում:

Որքան շատ լինի հաշմանդամություն ունեցող անձանց դրական պատկերում ապահովող մեդիա արտադրանքը, այնքան կարագանա վերաբերմունքի փոփոխությունը: Դրական պատկերում ապահովելու համար՝ ԶԼՄ-ն պետք է հաշմանդամություն ունեցող անձանց դրական պատկերներ ներառի հաղորդակցություններում և լիազորի միմիայն դրական պատկերում ներառող մեդիա ապրանքներ:

<u>Հաշմանդամություն ունեցող անձանց մի՛ պատկերեք որպես</u> հաշմանդամության զոհեր, հերոսներ, ուրիշներից կախյալ անձիք կամ բացառապես անվասայլակով տեղաշարժվող անձիք: Կարևոր է ներկայացնել հաշմանդամության բազմազան տեսակներ, այդ թվում նաև չերևացող հաշմանդամություն ունեցող անձանց:

<u>Հերոսական կերպարներ</u> օգտագործեք միայն բացառիկ դեպքում: Այսպիսի պատկերումը չի արտացոլում հաշմանդամություն ունեցող անձանց ամենօրյա իրականությունը: Հիշեք, որ հաշմանդամություն ունեցող ոսկե մեդալակիր մարզիկը հաշմանդամություն ունեցող անձանց համար ներկայացուցչական է այնքան, որքան Հենրիխ Մխիթարյանն է ներկայացուցչական՝ հաշմանդամություն չունեցող անձանց համար: Բացի այդ, մշտապես բարձրաձայնելով միայն մեծ բարձունքների հասած անձանց

մասին, դուք կարող եք իջեցնել հաշմանդամություն ունեցող որոշ անձանց ինքնագնահատականը:

Զոհեր: Ընդհանուր առմամբ, հաշմանդամություն ունեցող անձանց մի՛ պատկերեք որպես զոհեր կամ պասիվ անձիք: Կարևոր է արտացոլել իրականությունը: Օրինակ, իսկապես հնարավոր է, որ հաշմանդամություն ունեցող անձիք ավելի խոցելի են հանցագործության նկատմամբ: Սակայն, յուրաքանչուր անձ էլ կարող է հանցագործության զոհ դառնալ:

Խնամողներ: Հաշմանդամություն ունեցող անձանց խնամողները հիմնականում նրանց ընտանիքի անդամներն են: Նրանք նույնպես թերի են ներկայացված զանգվածային լրատվության մեջ: Խնամողներին մի՛ պատկերեք հրեշտակների կամ նահատակների տեսքով, բայց միևնույն ժամանակ՝ մի՛ նվազեցրեք նրանց կարևորությունը: Խնամողներին և հաշմանդամություն ունեցող անձանց ներկայացրեք որպես հավասարների:

«Հեշտ ընթերցանություն» մտավոր հաշմանդամություն ունեցող անձանց համար: Գրաճանաչության հետ կապված խնդիրներ ունեցող անձանց, ինչպես նաև նրանց համար, ում մայրենի լեզուն հայերենը չէ, կարող է օգտակար լինել «հեշտ ընթերցանություն» ձևաչափը: ***«Հեշտ ընթերցանություն»՝ չի նշանակում մանկական լեզու:*** Այն ենթադրում է քիչ բառեր և շատ պատկերներ: Այլ բաղադրիչներ են հասարակ բառերը և մեծ տառատեսակը: Մեկ էջը պետք է պարունակի ընդամենը մեկ միտք:

Խոշոր տպագրությունը օգտակար է այն անձանց համար, ովքեր չեն կարող կարդալ համընդհանուր դիզայնով նախատեսված տառաչափը (12 միավոր): Այս դեպքում տառաչափը պետք է լինի ***16-22*** միավոր: Կրկնվող տարրերը, ինչպիսիք են օրինակ՝ վերնագրերը կամ էջերի համարները, պետք է միշտ էջի նույն մասում լինեն:

Տեսանյութերի աուդիո նկարագիրը տեսողական խնդիրներ ունեցող անձանց տեղեկատվություն է տալիս տեսանյութում առկա տեսողական՝ վիդեո մասի վերաբերյալ:

Բրայլյան տառատեսակը այժմ ավելի հազվադեպ է օգտագործվում, քանի որ նորագույն տեխնոլոգիաները տեղեկատվությունը մատչելի են դարձնում: Այնուամենայնիվ, շատերը, հատկապես ավագ սերնդի ներկայացուցիչները, նախընտրում են Բրայլյան ձևաչափը: Բրայլյան տեղեկատվությունը կարևոր է նաև այն դեպքում, երբ ընթերցողը պետք է հաճախակի անդրադառնա փաստաթղթին (օրինակ՝ հանդիպման օրակարգին): Հիշեք, որ խուլ-կույր անձանց համար Բրայլյան ձևաչափը հաղորդակցության միակ միջոցն է:

Ձևաչափեր խուլ կամ վատ լսող անձանց համար: Լուսագրերը տեղադրեք էկրանի ստորին մասի կենտրոնում: Տեքստի շուրջը բաց տարածություն թողեք: Գործածեք մեծ սպիտակ տեքստ Arial կամ նմանատիպ այլ տառատեսակով: Էկրանի վրա պետք է լինի առավելագույնը 2 տող տեքստ, և այն չպետք է հասնի էկրանի ծայրերին: Տեսանյութում երևացող անձանց անունները ներկայացրեք լուսագրերի վերևում*: Լուսագրերը պետք է խոսքը նույնությամբ վերարտադրեն, այլ ոչ թե մեկնաբանեն այն կամ ամփոփ ներկայացնեն: Եթե կադրում մի քանի անձ է խոսում, օգտագործեք գունային կոդավորում՝ բանախոսներին տարանջատելու համար:*

Մեր խուլ հայրենակիցների մեծամասնության մայրենի լեզուն հայերեն ժեստերի լեզուն է: Այս անձանց համար հաղորդակցության լավագույն միջոցը ոչ թե գրավոր տեղեկատվությունն է, այլ սուրդոթարգմանությունը, ժեստերի լեզվով տեսանյութերը, ինչպես նաև տեքստային հաղորդագրությունները (sms), հատկապես երիտասարդների համար:

Ժեստերի լեզվով տեսանյութերի մշակման համար՝ համագործակցեք ժեստերի լեզվին վարժ տիրապետող անձանց հետ, ովքեր գիտեն, թե ինչպես տեղեկատվություն տրամադրել խուլ լսարանին: Օգտագործեք հնարավորինս բարձրորակ սարքավորումներ: Օգտագործեք բարձր կոնտրաստ ունեցող

ֆոն, որպեսզի սուրդոթարգմանչի ձեռքերը և դեմքի արտահայտությունը հստակ տեսանելի լինեն:

<u>Տեսանկարահանում, լուսանկարահանում:</u> Ապահովեք նկարահանման վայրի լիակատար մատչելիությունը: Դերասանի կամ մոդելի՝ մատչելիության հետ կապված կարիքների մասին տեղեկացեք մինչև նկարահանումը և համոզվեք, որ դրանք կարող են բավարարվել: Իրականացրեք նկարահանման վայրի մատչելիության դիտարկում՝ գնահատելու համար, թե ինչ խնդիրներ կարող են առաջանալ և ինչը կարելի է հեշտությամբ փոփոխել՝ վայրն ավելի մատչելի դարձնելու համար: Համոզվեք, որ աշխատանքային օրը չափից դուրս երկար չէ, և անհրաժեշտության դեպքում ընդմիջումներ տրամադրեք:

<u>Թվային հաղորդակցություններ</u>: Թվային տեխնոլոգիաները կարող են ինքնուրույնության հնարավորություն տալ հաշմանդամություն ունեցող անձանց, եթե դրանք մատչելի են, իսկ հակառակ դեպքում՝ կարող են հավելյալ խնդիրներ ստեղծել: Կարևոր է ուսումնասիրել հաշմանդամություն ունեցող անձանց որոշ խմբերի կողմից օգտագործվող տեխնոլոգիաները, օրինակ՝ տեքստը ձայնի փոխարկող ծրագրերը:

Բառեր, որոնցից պետք է խուսափել, և բառեր, որոնք պետք է օգտագործել

Մի՛ օգտագործեք	Օգտագործե՛ք
անշարժունակը, հաշմանդամը	հաշմանդամություն ունեցող մարդիկ
տանջվում է ինչ-որ բանից, տառապում է ինչ-որ բանից, ինչ-որ բանի զոհ է	ունի հաշմանդամություն (վիճակի կամ վնասվածքի անվանումը, օրինակ՝ ունի Դաունի սինդրոմ)
անվասայլակին գամված	անվասայլակ, քայլակ օգտագործող մարդ
մտավոր հաշմանդամ, մտավոր թերզարգացած, հետամնաց, աննորմալ	մտավոր հաշմանդամություն ունեցող անձ
խեղանդամ, անաշխատունակ, ինվալիդ	հաշմանդամություն ունեցող անձ
կաթվածահար	ուղեղային կաթված ունեցող անձ (ՄՈՒԿ)
առողջ (ի տարբերություն հաշմանդամի)	հաշմանդամություն չունեցող անձ
մտավոր հիվանդ, անմեղսունակ, խելագար գիժ	մտավոր խնդիրներ կամ մտավոր հաշմանդամություն ունեցող անձ
խուլ ու համր, լրիվ խուլ	խուլ, լսողության խնդիրներ ունեցող անձ, թույլ լսողություն ունեցող անձ
կույրեր	տեսողական խնդիրներ ունեցող մարդիկ, կույր մարդիկ, թույլ տեսողություն ունեցող մարդիկ
էպիլեպտիկ, դիաբետիկ, դեպրեսիվ աուտիկ և այլն	էպիլեպսիա (դիաբետ) դեպրեսիա ունեցող անձ
գաճաճ, թզուկ	հասակի զարգացման խնդիրներ ունեցող մարդ, կարճահասակ մարդ
մոլագարություն, նոպաներ	ցնցումներ, ուշաթափություն
բնածին դեֆետկ	ի ծնե հաշմանդամություն ունի

ՀԱՂՈՐԴԱԿՑՈՒԹՅՈՒՆ

Ինչպե՞ս աշխատել ԶԼՄ-ների հետ և պատրաստվել հարցազրույցի:
Խորհուրդներ և առաջարկներ հաշմանդամություն ունեցող անձանց համար:

- Հիշե՞ք, ԶԼՄ-ները կարող են լինել հզոր դաշնակից՝ հաշմանդամության ոլորտում առկա հիմնախնդիրները բարձրացնելու համար:
- Մի՞ զլացեք, ինքներդ տեղեկացեք հարցազրույցի անցկացման վայրի մատչելիության մասին:
- Անհրաժեշտությամ դեպքում լրագրողին նախօրոք տեղեկացրեք ձեր հատուկ կարիքների մասին:
- Եղե՞ք հնարավորինս բարեհամբույր և բարյացակամ: Ստեղծե՞ք դրական հարաբերություններ ԶԼՄ ներկայացուցիչների հետ՝ շարունակական համագործակցության համար:
- Մի՞ անդրադարձեք ձեր հաշմանդամությանը, եթե հարցազրույցի թեման այլ է :
- Հարցերին պատասխանե՞ք հակիրճ և բովադակալից:
- Նախքան պատասխանելը՝ ուշադիր լսեք յուրաքանչուր հարց: Խնդրե՞ք, որ այն կրկնեն, եթե չեք հասկանում: Հարցրե՞ք լրագրողին, թե դուք պե՞տք է որևէ բան հստակեցնեք: Եթե դուք պատասխան չունեք, հարցրեք լրագրողին, թե որտեղի՞ց կարելի է ինֆորմացիա ձեռք բերել:
- Չկա այնպիսի այտահայտություն, որը «հրատարակման ենթակա չէ»: Մի՞ ասեք այնպիսի բաներ, որոնք դուք չեք ցանկանա լսել կամ տեսնել հետագայում: Իմացե՞ք, որ ցանկացած բան, որը դուք կասեք ընկերական մտերմիկ միջավայրում, կարող է հայտնվել տպագրության մեջ կամ եթերում (նույնիսկ, երբ դուք կարծում եք, որ հարցազրույցն ավարտվել է, ձեր ասած խոսքերը կարող են մեջբերել):
- Եղե՞ք ուշադիր, որպեսզի չշեղվեք հիմնական թեմայից:

- Առավել ինքնավստահ լինելու համար՝ նախօրոք նյութեր և արդիական տեղեկություններ հավաքեք թեմայի վերաբերյալ:
- Երբեք մի՞ գերագնահատեք կամ թերագնահատեք լրագրողի գիտելիքները ձեր թեմայի վերաբերյալ: Եթե կարծում եք, որ լրագրողը ինֆորմացիայի վերաբերյալ սխալ հարցեր է տալիս, մի՞ վարանեք ուղղել դրանք: Առաջարկեք հավելյալ ինֆորմացիա, որտեղ անհրաժեշտ է:
- Լրատվությունը ձեզ գովազդող ընկերություն չէ: Նրանց նպատակն է տեղեկացնել հանրությանը, այլ ոչ թե լինել ձեր խոսնակը: Գրագետ լրագրողը կգրի ազնիվ և օբյեկտիվ պատմություն:
- Մի՞ ստիպեք, որ ձեր կազմակերպության անունը ներառեն պատմության մեջ: Լրագրողներն ատում են, երբ իրենց թելադրում են ինչ գրել:
- Խոսե՞ք պարզ տերմիններով՝ օգտագործելով որքան հնարավոր է քիչ մասնագիտական և տեխնիկական բառեր: Պատմեք հաջողված, իրական պատմություններ, որոնք կբացահայտեն ձեր տեսակետը:
- Հսկողության մեջ պահեք հարցազրույցը՝ լսելով հարցի ենթատեքստի տակ գտնվող ավելի մեծ խնդիրը և կապ գտեք ձեր խնդրի հետ:
- Օգտագործե՞ք մեկ, հստակ նախադասություն՝ արտահայտելու ձեր տեսակետը:
- Եթե ունեք լսողության խնդիր, նախքան հարցազրույցը հիշեցրեք լրագրողին , որ ավելի հարմար կլինի, եթե սուրդոթարգմանիչը տեղավորվի իր կողքին, որպեսզի ձեր հայացքը ուղղված լինի իրեն:
- Մի՞ կրեք սպիտակ հագուստ: Այն փայլում է և ամենաարտահայտիչն է հեռուստացույցի էկրանին:
- Մեղմ երանգներով վերնաշապիկները ամենահարմարն են հեռուստատեսային եթերի համար:
- Մի՞ կրեք սև հագուստ, այն չափազանց կոպիտ է և ներծծում է ողջ լուսավորությունը:

- Մի՞ հագեք ալ կարմիր: Այն շեղող է:
- Մի՞ կրեք կախվող օղեր: Դրանք շեղում են:
- Մի՞ կրեք գծավոր, եղևնաձև, վանդակավոր, փոքր խառը նախշերով հագուստ կամ աչքի ընկնող (ճչացող) զարդեր: Դրանք աղավաղվում են նկարահանման ժամանակ:
- Հագնվե՞ք հասարակ, պարզ ձևով:
- Հեռուստադիտողները պետք է կենտրոնանան ձեր դեմքի և ձեր ասածի վրա, ոչ թե հագուստի:
- Խոսե՞ք ավելի բարձր և եռանդուն, քան սովորաբար, բայց մի բղավեք::
- Եթե դուք նյարդայնացած եք, դուք կարող եք ավելի մեղմ և հանդարտ խոսել, քան սովորաբար:
- Դուք պետք է խոսեք ավելի հնչեղ և տարատեսակ, երբ տեսախցիկի դիմաց եք: Եթե դուք ընդամենը բարձրաձայն խոսեք, դուք անբնական կթվաք:
- Դիմահարդարվեք: Համոզվեք, որ ձեր դիմափոշու գույնը համապատասխանում է ձեր մաշկին:
- Մի՞ օգտագործեք փայլող շրթներկ կամ շպար:
- Մազերը աչքերի վրա մի՞ գցեք և կոկիկ սանրեք:
- Մի կրեք մգեցված ակնոց:
- Եթե տեսախցիկի կողքին էկրան է տեղադրված, ապա հարցազրույցի ընթացքում դրա միջոցով ձեզ մի նայեք: Դուք նյարդային և տարօրինակ տեսք կունենաք:
- Եթե դուք կրում եք ականջակալ և կորցնում եք դրա ձայնը, հանդարտ հայտնեք ձեր անունը և ասեք, որ ոչ մի բան չեք կարողանում լսել: Ռեժիսորը պետք է որ կարողանա ձեզ լսել և կատարել անհրաժեշտ փոփոխությունները:
- Մի՞ ճոճվեք հետ և առաջ:
- Տեղեկացեք ինչքան հնարավոր է շատ այն հյուրերի մասին, ովքեր ձեզ հետ են մասնակցելու:
- Մի՞ խաչեք ձեր ձեռքերը:
- Ձեռքերը գրպաններում մի՞ դրեք:

Ուղեցույցում զետեղված նյութերի պատրաստման համար օգտագործվել է նաև հետևյալ գրականությունը:

Թարգմանությունը՝
«Ագաթ» Հատուկ Կարիքներով Կանանց Կենտրոն ՀԿ

Guidelines for Researchers when Interviewing People with an Intellectual Disability written by Ms. Maureen D'Eath and the National Federation Research Sub Committee Members

TJ Walker Media Training Worldwide www.mediatrainingworldwide.com

Supports Intensity Scale Guidelines for Interviewing People with Disabilities Published by American Association on Intellectual and Developmental Disabilities

Preparing for a TV or Talk Radio Interview: National Resource Center on Domestic Violence

Guide to Etiquette and Behavior for Relating to Persons With Disabilities. American Friends Service Committee.

Just Ask: Integrating Accessibility Throughout Design by Shawn Lawton

Strategies for Communication Specialists and Journalists to Interview a Person With a Disability: Together we rock

IDEAS- Ձեռնարկ որոշումների մասնակցային կայացման համար:

«Ագաթ» հատուկ կարիքներով կանանց կենտրոն հասարակական կազմակերպություն

Հասցե՝	ՀՀ, Շիրակի մարզ, ք. Գյումրի, 3114 Բաղրամյան 29
Հեռախոս՝	(0312) 4.22.61; 077/043.042
Ֆաքս՝	(0312) 4.22.61
Էլ. փոստ՝	agate.ngo@gmail.com info@agatengo.am
Ինտերնետային էջ՝	www.agatengo.org www.dha.agatengo.org

«Ազաթ»
Հատուկ Կարիքներով Կանանց Կենտրոն
Հասարակական Կազմակերպություն

Գյումրի 2014